ՈՒՐԲԱԹ 7 ՕԳՈՍՏՈՍԻ 1881—№ 154

Հրատարակվում է ամեն օր բացի երկուշաբթի և տօն օրերից։
Տարեկան գինն է 10 ռուբլի։
Առանձին համարներով [illegible] 5 կոպ.։

Խմբագրատունը բաց է ամեն օր բացի կիւրակէ և տօն օրերից առաւօտեան 10—2 ժամը կէսօրից յետ։

Բաժանորդագրուելիս դիմում են ուղղակի խմբագրութեան հասցէով. Въ ред. газеты «Мегу Айастани», въ Тифлисъ, կամ Rédaction de «Meghou Haïastani» à Tiflis (Caucase).

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

№ 154—ՈՒՐԲԱԹ 7 ՕԳՈՍՏՈՍԻ 1881

Խմբագրութեան ուղղած թէ՛ յօդուածները և թէ՛ նամակները պէտք է պարզ գրուած լինին գրողի ստորագրութեամբ և հասցէով։ Խմբագրութիւնը կարող է փոփոխել, ուղղել և կրճատել յօդուածները։ Խմբագրութիւնը իր վերայ չէ առնում յետ ուղարկել յօդուածները և պահում է երկու ամիս մինչև ցպահանջ։

Յայտարարութիւնների համար վճարում են ամեն մի տողին 1½ կոպէկ։
Յայտարարութիւններն ընդունվում են խմբագրատանը և պ. Շահվերդեանի պավիլիոնում։
Յայտարարութիւնները ընդունվում են հայերէն և օտար լեզուներով։

ՔՍԱՆԵՒՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

Ազգային.—Թղթակցութիւնք Շուլավէրից և Իգդիրից։
Քաղաքական.—Անգլիա.—Գերմանիա.—Ֆրանսիա։
Մանր լուրեր։
Խառն լուրեր։
Յայտարարութիւններ։

ԱԶԳԱՅԻՆ

ՇՈՒԼԱՎԷՐ

(Թղթակցութիւն «Մեղու Հայաստանի» լրագրի)

Մի քանի տարի առաջ Թիֆլիսից իմ հայրենակից պ. Ա. Մ. իր նամակում մեծ ցանկութիւն է յայտնում, որ գիւղացիք սովորութիւն անեն յարդեայ գլխարկներ գործածել և տարածեն ամեն տեղ։ Մեր գիւղի աղջկերքը ցորենի սպիտակ ծղօտներից արդէն սովոր են կալաթներ, սալաններ հիւսել. հիւսուածքը կանոնաւոր է, բայց չափազանց կոպիտ և հաստ են չինում, որ գլխարկան լինի, չուտ չը պատառի թուլ և ուրիշ բան ածելիս։ Ցանկալի սկզբից արդէն փոքր աղջկերքը ծղօտներ են թրջող գնում, այս դէպքում աղջկանց հրապուրողը, կալաթների հիւսման դրդողը միայն թութն է։ Եթէ մի ցոյց տուող, առաջնորդ լինի, հայրենակցիս փափագը շատ հեշտութեամբ կը կատարուի, կալաթ գործողը, գլխարկ էլ կը գործէ։ Մեր գիւղացիների այդ տեսակ գլխարկները պէտք են մայիսից մինչև հոկտեմբեր, առաւելապէս հնձի և կալի ժամանակ, երբ համ եղանակը շոգ է, համ աշխատանքը ծանր է։ Ցիմար նախապաշարմունքը քանի զոհեր առեւ որ չէ տարել. գիւղացիք փութանոց փափախները արեւում ճճճոտալիս գլխներին կը դնեն, իսկ թեթև յարդեայ գլխարկը ամօթ կը համարեն կարծելով թէ եանեներից ղու են տալիս։ Շոգ ժամանակ փափախներից միթում ազատուելով գլխները թարձր աղլուխներով կապում են, որ թէև թեթև, սակայն քրանքի կեղտոտ գոլորշիքը իր միջից դուրս չի թողնում, գլուխը քրտնքած է պահում, վերցնելուն պէս՝ քամի դիպչում է և գլուխը մրսացնում ու ցաւեցնում։ Մեր գիւղացիք խելօք կը լինեն եթէ պապական անօգուտ ադաթները մէկ կողմ դնեն, այդ օգտաւէտ ծղօտի գլխարկները գործածեն, համ իրանք կ'օգտուեն, համ էլ գիւղացի աղջկերքը իրանց ձեռագործութիւնը կ'ազնուացնեն, կ'աշխատեն բարակ և ճաշակով դուրս բերել, երբ կը տեսնեն որ բացի թութից մի գրաւիչ բան է նրանց հրապուրում—փողը։

Մի քիչ էլ խօսեմ այնպիսի հարցի վրայ, որ մեր ազգի մէջ կարծես տասարի ցաւ դառաւ, այնքան դանգ արեց շատ գրողների գլուխը։ Խօսքս անշուշտ ուսումնարանի վրայ է։ Անցեալ տարի աշունքին պ. Ն. Մամիկոնեանը շատ յորդորեց ժողովրդին ուսումնարանի շինութեան համար, բացի աջակցութիւնը, իր կողմից նիւթական նպաստ խոստանում էր, յոյս էր տալիս, որ ուրիշ տեղից օգնութիւն ևս կը ճարէ, և մտադիր էր գարնան գործը սկսել, դժբաղդաբար ամառ մտանք, դեռ ոչինչ չը կայ։ Ովբովհետև, երեխինը չը գտնայ, ծառ չինածը ագռաւը քանդում էր, բարի մարդու չինածը չար մարդը քանդում էր, հարկատու գիւղացու չինածը մուֆտախորում ազնուն էր քանդում։ Այս տխուր պատճառները սառեցրին պ. Մամիկոնեանի եռանդը. մանաւոր բարեմիտ անձանց խնդիրքը այդ եռանդը մինչև այժմ վերականգնելու՝ այժ չ'ունեցան։ Իսկ ես ասում եմ, որ մեծ մարդը վհատելու համար չէ ծնում, յարմար ժամանակ է գործելու, պ. Մամիկոնեան, գործել տուր ժողովրդին, դարձեալ առաջնորդիր, երկայնամտութիւնը կը յաղթէ։ Մի յարգելի ծերունի, որի կեանքը շատ վատ աստղեր ունի, որին Շուլավէրը այնքան պարտական է, որքան Թիֆլիսը Ներսէս Ե.-ին, ասում է, եթէ գիւղացիք քար, աւազ, կիր կը պատրաստեն, ուսումնարանի համար մի յարմարաւոր շինութիւն կը կառուցանեմ, բայց Աստուած կտրէ հայ մարդու, հայ հասարակութեան անգլխութիւնը, անվստահութիւնը, անպիտան անտարբերութիւնը, իսկ մեր հինգ քահանաների անշնորհքութիւնը, անհասկացողութիւնը, որ մի անգամ չ'եկաւ թէ ժողովրդին ասեն—որդիք, ուսումնարանի վրայ հոգս տարէք, ահա մի բարերար մարդ ձեր որդկանց համար ուսումնարան է շինում, ամենքդ մի սայլ քար կամ աւազ բերէք։ Եթէ անէ, դարձեալ Մամիկոնեանը կարող է. ժողովրդի առատասիրտ ժամանակն է, որ դրախտական երկրում ասես, որ հաչող շուն չը լինի մարդու ետևից, մինթէ, պ. Մամիկոնեան, մի քանի չըկամ, կուռք մարդկանց պատճառով՝ ամբողջ գիւղի օգուտը դէն պէտք է գցէք, պէտք է անտարբեր աչքով նայէք փողոցում թափառող անթիւ առոյգ մանուկների վրայ, որ զվիկ-զվիկ, պատառոտուն լաթերի տակ առողջ և փայլուն միտք ունին թաքցրած։ Իսկ ձեզ, իմ սիրելի հայրենակիցներ, այս կ'ասեմ խորամանկ ազաների խելքով հաց մի ուտէք, ձեր զվաթով, ռաչից տղերանց մի քիչ ուսումն մտցրէք. ահ չը կայ, մի վախենաք, մարմնու չափազանց այժ ունէք, խելքի-մաքի այժ չ'ունէք, ասում է առածը, հասկացող մարդ չ'ունէք. ուստի, իւրաքանչիւր ռուսախօս, ով էլ լինի, որ ձեր մէջն է գալիս, հարիւրներով ի զուր ծծում է. չէ՞ որ այդ փողերը ձեր ուսումնարանի վրայ կը մսխէք կամ մի ընկերութեան կ'ուղարկէիք, որոնց համար մի կոպէկ տուած չ'ունէք։

Մեր գիւղի ուսուցիչներից մէկը, որ տեղացի է, բարեկենդանին իր աշակերտներով մի ներկայացում տուեց, որ թէ զաւախօսութիւն էր, թէ թատրոն էր։ Սենեակի հետ բեմը ևս պարզ էր, դէկորացիաները աշխարհագրութեան մեծ քարտէզներ էին։ Մարդիկը նստած էին աշակերտների նստարանների մէջ, զարմանալով նրա էին թափվում. ամենաբարձր գինը 20 կոպէկ էր յօգուտ գրադարանի, շատերից խկի չ'առացուեցան էլ, հետևող չը կար։ Ամենից առաջ խումբը (դերասանները) երգ երգեց, զաւախօսութիւնը սկսուեց, դարձեալ երգ, ապա խաղացին «Երկուսս էլ քաղցած ենք երկուսս էլ փող չ'ունինք» պիէսան։ Հրաշալի կերպով անցաւ, փողոցում լեզու չ'ունեցող երեխէն մարդիկ զարմանում էին, թէ ինչ համարձակ խօսում է. ծիծաղին և ծափահարութեան վերջ չը կար, զարմանում էին թէ երեխաներից էսպէս հունար. շնորհակալութեամբ և օրհնելով հեռացան ուսումնարանի համեստ բեմից։ Միայն քահանաները հակառակեցան և չ'եկան իրանց կարգին անարժան ածականներ վերաբերելով տեղացի ուսուցչին։

Ց. Գ. «Մշակի» մէջ կարդացի նամակը, որով պ. Շահբուդաղեանցը մոռնացոյց է անում իր թարգմանելի գրքերը, ի թիւս որոց և Վիլեամ Ջաննինգ, Պուռեսսի գրուածքը։ Ես այդ վաղուց թարգմանած ունիմ. ուստի կը խնդրէի պ. Գ. Շահբուդաղեանից, որ զանց առնէր այդ գրքի թարգմանութիւնը։ Արդէն պատրաստ է տպագրութեան համար իմ հաւաքածուն գիւղական ամեն բաների։

*

ԻԳԴԻՐ

28 յուլիսի.

(Թղթակցութիւն «Մեղու Հայաստանի» լրագրի)

Մեծապատիւ խմբագիր։ Պատուական լրագրիդ 66 համարի Իգդիրցի անյայտ թղթակիցը գրում է, որ իբր թէ «Իգդիրմովեցոնց մի մասն ստիպուած է գաղթել շնորհիւ մի հայ պաշտօնատարի, որովհետև այս վերջինը սեպհականացրել է իրան առաջինների վարելահողերից մի մեծ մասն, պատճառելով որ իբր թէ այդ գետինը ճահիճ է եղած և նա իր միջոցներով է ցամաքեցրել, և այսպէս գործը ներկայացնելով կառավարութեանը՝ հողի այդ տարածութիւնը պարգև է ստացել, մինչդեռ այդ գետինը ճահիճ չէ եղած» և այլն և այլն և այլն։ Որովհետև գործի էութիւնը ինձ շատ լաւ յայտնի է և առաջ բերած թղթակցութիւնը սկից մինչև գլուխ զրպարտութիւն է, ուստի ես իմ պարտքը համարեցի մի երկու խօսք ասել այս մասին և յոյս ունիմ, մեծապատիւ խմբագիր, որ մի անկիւն կը շնորհէք ձեր լրագրի մերձաւոր համարներից մէկում։

Ամբողջ Սուրմալուի գաւառին և բոլոր նրանց, որոնք պարսից ժամանակից սկսած եղել են այս կողմերում, յայտնի է, որ Արարատի ստորոտում Արհաջի, Բահարլու, Սուլթանապատ և Իգդիրմովի գիւղերի մէջ մինչև 1866 թուականը կար մի ահագին լիճ, որ կրում է Ղարագեօլ անունը, շրջապատուած ճահիճներով, որոնք գոյացել էին Արաքսից հանած 20-ից աւելի առուների աւելուածքներից և Արարատի ձիւնից գոյացած վտակներից և հեղեղներից, որ քանի գնում էր լիճը և ճահիճները ընդարձակվում էին և վտանգ էին սպառնում տեղական ազգաբնակութեանը, որովհետև ջրերը միշտ և անընդհատ թափվում էին լճի մէջ, իսկ վերջնից դէպի Արաքսը դուրս գնալու տեղ չը կար։ Վերջին տարիներում նրա տարածութիւնը հասաւ 25 քառակուսի մղոնի և սկսեց ծածկել արհաջեցոնց տները և այլ շէնքերը և տարածուել մինչև Ալիզամարլուի, Իգդիրի, Խօջաբարի և Յայֆալուի պարտէզները։ Վերջապէս յիշեալ 66 թուականին ժողովրդի աղաղակը հասաւ իշխանութեան ականջին և տեղական նահանգապետի ընտրութեամբ հայ-պաշտօնատարը 4 տարի անընդհատ աշխատելով և ծախսելով իր սեպհականութիւնից մի յայտնի գումար, ժողովրդի օգնութեամբ ցամաքեցրեց այդ լիճը մի ահագին ջրանցք հանելով մինչև Արաքսը և կանոնաւորելով այդպիսով մեր գաւառի ջրաբաշխային դիրքը, որով ազատեց երկիրը սպառնացող վտանգից, ճահճային նեխած ջրի մեռցուցիչ և ապանիչ ազդեցութիւնից և շնորհեց նրանց ահագին տարածութեամբ ամենաբերրի վարելահողեր, մարգագետիններ, արօտատեղեր և առատ ջուր ցանքերը ջրելու և բազմաթիւ ջրաղացներ շինելու համար, որոնց բացակայութիւնը զգալի վնաս էր տեղացիներին, որովհետև նրանք ստիպուած էին լինում իրանց բնաղունը տանել Երևան աղալու (60—80 վերստ), ենթարկուելով զանազան ծախսերի, փորձանքներին և վտանգներին։ Եւ այդ հսկայական գործը և արդիւնաւոր գործունէութիւնը, ի հարկէ, անվարձ չը մնաց կառավարութեան և ժողովրդի կողմից թէ բարոյապէս և թէ նիւթապէս, առաջինը պարգևեց նրան ցամաքեցրած հողի $^1/_{20}$ մասը *), իսկ երկրորդը անմահացրեց նրա յիշատակը, տալով նրա հանած ջրանցքին նրա տոհմանունը, որ և յաւիտեան կապուեց Արարատեան սարի հետ։ Յափշտակողները այսպիսի պատիւ չեն ստանում։ Այս ամենը ճշգրիտ իրողութիւն է և յայտնի է, ինչպէս վերը ասացի, ամբողջ Սուրմալուեցոց, հետևաբար նամակս գրուած է «Մեղուի» օտարաքաղաքացի ընթերցողների և նոյն իսկ խմբագրութեան համար, որ կարող լինի եզրակացնել, որքան բարեխիղճ է եղել յիշեալ յօդուածագիրը, որոնց առաջարկում եմ ստուգելու համար դիմել 1828 թուականից, երբ ռուսը նուաճեց հէնց այս երկիրը, մինչ 1870 թուականը կազմած քարտէզներին, ոչ միայն 1 կամ 5 վերստանոց, այլ և 20 վերստանոց, որի վրայ, ինչպէս յայտնի է, փոքր և աննշան լճերը չեն նշանակվում, այլ միայն մեծ և նշանաւորները, և նշանակած կէտի վրայ կը գտնես մի լիճ շրջապատուած ճահիճներով, այդ Ղարագեօլն է, որ այժմ միայն պատմական անուն է մնացել և որի տեղ այժմ կը տեսնես զարդարուն պարտէզներ և կանանչազարդ դաշտեր և այգիներ ի պարծանս հայ-պաշտօնատարի, որին երախտապարտ է համարում իրան հազարաւոր հողագործ այն ամեն բարիքների փոխարէն, որ ընդունում է հայ-պաշտօնատարի եգիպտական աշխատութիւնից։ (Եգիպտական անուանելս զարմանք չը համարէք, ընթերցող, երևակայեցէք ձեզ մի ջրանցք 60—80 վերստ երկարութեամբ և 40 կանգուն լայնութեամբ, որ բացի Արաքսից վերառած ջրերից ընդունում է իր մէջ և վերին գիւղերի առուների աւելուածքները և հեղեղների ջրերը և տալիս է ներքին գիւղերին և մինչև Տաշբուռուն—Արալխս առատ ջուր ցանքերը ջրելու համար, իսկ գարնանը և աշնանը այդ ջրերի աւելորդը տանում, թափում է Արաքս)։ Այժմ դառնանք այն հարցին, թէ արդեօք Իգդիրմովեցիք հողի պակասութեան պատճառով ստիպուած են գաղթել։ Ղարագեօլի իր ճահիճներով ցամաքեցնելը Իգդիրմովեցոց աւելի, քան թէ մի ուրիշ գիւղացոց, օգտաւէտ եղաւ՝ ջրից ազատած հողի մի մեծ կտորը անցաւ նրանց ձեռքը և նրանք ոչ թէ միայն անկարող գտնուեցան ամբողջապէս մշակել թէ իրանց ի բնէ ունեցած հողը և թէ նոր ստացածը, այլ սկսեցին նոյնից մեծ քանակութեամբ ծախել մերձակայ գիւղացոց և այն ոչ փոքր, այլ մեծամեծ մասերով, այնպէս որ միայն մի Իգդիրցի քահանայ գնեց 12,000 ռուբլու գետին, որի վերայ անտառ է գնել և հազարաւոր պտուղի ծառեր տնկել և ուրիշ 20-ից աւելի անձինք, որոնց անունները և վճարած

---

*) Եթէ անյայտ Իգդիրցին կամ չափ չի հասկանում, կամ խոշորացոյցով է նայել այդ հողի վրայ։

գումարները մի առ մի յիշելը առայժմ աւելորդ եմ համարում․ Կառավարութիւնը իմանալով այդ բանը, 1880 Թուականին հողաչափի միջոցով ստուգեց Իգդիրմովեցոց հողի իսկական քանակութիւնը և նրանց հասանելի բաժինը ծխահամար հաշուով ամենավերջին մեծ չափով տալուց յետոյ գտաւ այնքան աւելորդ հող, որ կարելի համարեց այնտեղ 31 ընտանիք գաղթական հայեր բնակեցնել, որոնք սկսել են արդէն տներ շինել և պարտէզներ տնկել․ (Այս դաշտումն, առհասարակ, հազիւ թէ գիւղ գտնուի, որ Իգդիրմովեցոց կէսի չափ հող ունենայ)․

Բայց, ո՞վ է անյայտ Թղթակիցը, որ իր կցկտուր յօդուածով կամենում է ազատամիտ անուն ժառանգել և փայլել պարզամիտ ամբոխի առաջ և այդպէս անխղճօրէն ոտնակոխ է արել ճշմարտութիւնը․ Ասում են անյայտ Թղթակիցը մի եկեղեցական է․ Բայց ես անձամբ հրաժարվում եմ հաւատալ այս լրին, որովհետև թէև նա մանկական հասակում անյայտացած լինելով իր հայրենի գիւղից—Իգդիրմովուց, և երկար տարիներ անցնելուց յետոյ նորից երևեցաւ Տաճկաստանի կողմերից, բայց նա ականատես չէր ջրանցքի բացվելուն, բայց և այնպէս որ լիճը թողած գնացել էր և վերադառնալով նրա տեղ գտել էր․ ․ ․ եան ջրանցքը և հետևաբար նա հետաքրքրուած կը լինէր այդ փոփոխութեան պատճառները, մանաւանդ ջրանցքի իրան յայտնի անունը կրելու պատճառը իմանալ, անպատճառ նրան իր մեծ եղբայրը, որ մի պատուաւոր և գործունեայ քահանայ է և մեր գաւառի բարեկարգը և որի մօտ ինքն ապրում է, պատմած կը լինի հայր սրբին, թէ ինչպէս նա հազարաւոր մարդկանց գլուխը անցած մի փառաւոր ճաշկերոյթից յետոյ, հանդիսաւոր կերպով թափօր անելով օրհնում էր հայ-պաշտօնատարի գործը և իրան հայ-պաշտօնատարին․ Վերջապէս նա ինքն Թղթակիցը, նկատելով Իգդիրմովեցոց հողերի աւելորդ լինելը այս իսկ տարի, նոյն յօդուածից առաջ, առաջարկեց Իգդիրմովեցոց մի նշանաւոր գումարով կապալով տալ իրան, մօտ—60 խալվարի տեղ ութ տարի ժամանակով, սակայն տեղացի մոլլաները և ախունդները, մանաւանդ այնտեղ ազդեցութիւն ունեցող Սադիխ անուն Թուրքը *) չը համաձայնեցան և նրա պատրաստած Թուղթը, որ ստորագրուած էր միայն 2—5 հայերից, պատռեցին․ Այդպիսով այդ գաղտնիքը, այն է Իգդիրմովում աւելորդ հող լինելը յայտնուելով Իգդիրցի Աւագ Աւագեանին նա խնդիրքով դիմեց նահանգական կառավարութեանը այդ հողը, իբրև արքունի ազատ հող, կապալով տալ նրան, որի համաձայն այժմ գրագրութիւն է բացուել և գուցէ գործը, կը վճռվի յօգուտ Աւագեանի․ Այս ամենը ի նկատի ունենալով մեզ անհաւատալի է թվում, որ 66 համարի Թղթակիցը լինի մեզ յայտնի եկեղեցականը, այլ մենք կարծում ենք, որ Թղթակիցը կը լինի այն Իգդիրցիներից մէկը, որին չէ յաջողել ․ ․ ․ եան ջրանցքի վրայ ջրաղաց ունենալ կամ Իգդիրմովեցոց հողերից իրանց առաջարկած գներով գետին ձեռք բերել․

Այժմ տեսնք, պպ. ընթերցողներ, որ Արարատի ստորոտումնշանակած տեղում սորանից 12—15 տարի առաջ արդարև եղել է մի նշանաւոր լիճ՝ Ղարագեօլը, որ այդ լիճը այժմ ցամաքեցրած է հայ-պաշտօնատարի ջանքով, որ այդ լճի տեղ ձգվում է այժմ․ ․ ․ եան ջրանցքը իբր կոթող հայ պաշտօնատարի մեծագործութեան, որ հայ-պաշտօնատարը պարգև է ստացել, իբր արդար վաստակ, մի կտոր գետին, ոչ թէ սեպհականացրել է (սեպհականացնել նշանակում է ինքնագլուխ և անիրաւացի կերպիւ տիրել), և այն ոչ այն տարածութեամբ, որ ցոյց է տուել պ. Իգդիրցին և որ Իգդիրմովեցիք ոչ թէ այնքան զրկուած են հողով, որ ստիպուած լինին գաղթել մի այլ տեղ, այլ նրանք հողի այնքան առատութիւն են վայելում, որ մի քանի հազար իսկ ռուբլիների գետին ծախելուց յետոյ այժմ էլ սակարկութիւն են անում գետնի մի կտոր ևս ծախել․ Այս ամենից հետևցնելու է, որ 66 համարի Թղթակիցը ո՞վ գիտէ ինչ նպատակներով ուրացել է Ղարագեօլի գոյութիւնը, ուրացել է հայ-պաշտօնատարի ժողովրդին արած մեծ ծառայութիւնը և իբր պաշտպան է հանդիսացել խեղճ Իգդիրմովեցոց իր սխալ նամակով․

Սուրմալուեցի․

---

*) Իգդիրմովի մեծ մասը Թուրքեր են․

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԳԼԻԱ․

«Köln. Zeit.» լրագրին գրում են Լոնդոնից յուլիսի 21-ին: Երեկ լորդերի ժողովում սկսուեցաւ պարլամենտական պատերազմը իրլանդական հողային օրինագծի երկրորդ ընթերցման ժամանակ: Աւելորդ է այստեղ բացատրել, որ իրաւունքի կէտից այդ օրը բռնէ լորդերի պատմութեան մէջ նշանաւոր տեղ, որովհետև երկար ժամանակէ ի վեր ոչ մէկ խնդիր չէ երևացել, որը այդպէս խոր թափանցեր այս մարմնի պահպանողական շահերի մէջ, ինչպէս անում է այդ հողային օրինագիծը: Դրանով լորդերը ոչ թէ միայն հրաւիրվում են իրենց պահպանողական հիմունքների մեծ մասը մէկ կողմը ձգելու, այլ և իրենց իրլանդական հողերից մի նշանաւոր կտորը: Ամեն լորդ Իրլանդիայում կալուածք չունի, բայց ամենքը առանց բացառութեան պէտք է երկիւղ կրեն, որ Իրլանդիայի օրինակը, այսինքն հողային իրաւունքների կրճատումը իբրև օրինակ կը ներգործէ Շօտլանդիայի և Անգլիայի վրայ․ դրանից ըստինքեան ծագում է օրինագծի դէմ ընդդիմութեան ընդհանրութիւնը: Բայց մինչև երեկ լորդերը կատարեալ լռութիւն էին պահում բացի դուքս Արգիլլից, որի դուրս գալը Գլադստոնի պաշտօնէութիւնից նրան ըստինքեան յայտնի հակառակորդ է դարձնում պաշտօնէութեան, միւս ամենքը հետևում էին սպասող քաղաքականութեան: Այն մարդը, որ այժմ պաշտօնէութեան գլուխն է, չէր թող տալիս այլ և ուրիշ վարմունք: Գլադստոնի ազդեցութիւնը պատգամաւորների ժողովի վերայ այնպէս մեծ է և նա այնպէս պինդ համոզուած է հողային օրինագծի անհրաժեշտութեան մէջ, որ լորդերի կողմից տղայամիտ յանդգնութիւն կը լինէր ժամանակից առաջ նրա թշնամութիւնը զարթեցնել: Ինչպէս ես ձեզ երեկ գրեցի, Գլադստոնը այն կէտին է հասել, որ երկրորդ ժողովի (լորդերի ժողովի) գոյութեան վերայ նայում է բոլորովին անտարբեր․ բայց եթէ այս վերջինը մերժէ իր հողային օրինագիծը, այն ժամանակ նա նրա վերայ կը նայէ իբրև ընդհանուրի շահի թշնամու վերայ և չի քաշուիլ մօտակայ ընտրութեան ժամանակ իբրև կուսակցութեան նշանաբան լորդերի ժողովի ոչնչացնելը յայտարարելու: Դէպի այդ ժողովրդի մէջ հակումն կայ և Գլադստոնը ունի ճարտար լեզու այդ հակումին ոյժ տալու: Այսպէս ուրեմն լորդերի կողմից քաղաքական զգօնութիւն էր, որ առաջուանից աւելի լուռ մնացին լորդերը․ նոյն իսկ ոչինչ չը քաշուող լորդ Սալիսբուրին հետևեց նրանց օրինակին: Երեկ սպասում էին մեծ կալուածատէրերի կողմից յարձակումի, բայց սխալուեցան: Եթէ ես երեկ չը գիտնայի թէ ինչ նշանաւոր խնդրի վերայ է վիճաբանութիւնը, ես պարլամէնտի ճառից չէի կարող գուշակել: Լորդերը ուշ եկան իրենց սովորական դէմքով․ հասարակութիւնը սակաւաթիւ էր և լորդերի «լսեցէ՛ք, լսեցէ՛ք» խօսքերի եռանդը ամենևին սովորական խօսակցութեան տոնից չէր անցնում: Երբ ժողովի գրագիրը յայտարարեց իրլանդական հողային օրինագծի ընթերցումը հազիւ թէ մի շարժում նկատելի լինէր ժողովումը: Այդ ժողովի մէջ կեանք մտաւ այն ժամանակ, երբ լորդ Սալիսբուրին, ընդդիմադրութեան առաջնորդը բարձրացաւ խօսելու: Իւր ճառը երկու մասին էր բաժանուած: Առաջին մասումը աշխատում էր նա հողային օրինագիծը դատաքննելու և դատապարտելու և նրան ներկայացնել իբրև անկարելի և ընդհանուրին վնասակար, իսկ երկրորդ մասումը, որ հազիւ թէ մի քառորդ խօսքից բաղկացած էր, ազնիւ մարքիզը յայտնեց պարզ, որ նա երկրորդ ընթերցումին իւր ձայնը տալիս է, և առ այժմ յոյս ունի, որ այդ օրինագծի հեղինակների ենթադրութիւնները կ՛իրագործուին: Այս հակասութիւնը կարելի է միայն նրանով բացատրել, որ լորդերը առաջուց համաձայնուել են օրինագծի երկրորդ ընթերցումը ընդունելու: Ընդհանրապէս երեկուայ նիստը անում է մի կեղծ կռուի, մի թատրոնական ներկայացման տպաւորութիւն, որտեղ դերերը առաջուց բաժանուած են:

ԳԵՐՄԱՆԻԱ․

Իշխան Բիսմարկը Հալլէյում մէկ ուսանողական ընկերութեան տուած պատասխանում մի նշանաւոր խօսք է արտասանել գերմանական համալսարանների ազգային նշանակութեան մասին․ «Ծանր ժամանակներում համալսարաններ եղել են ազգային մտքի կրողները»: Այո, ճշմարիտ, ծանր ժամանակ էր այն էպօխան 1817-ից սկսած մինչև ազգային հոգու զարթնելը 1848 թուին, այս մինչև 1866 և 1870 տարիները: Բայց ո՞վ էր, հարցնում է «National-Liberale Corr.» թերթը, որ դէպի մի միացեալ գերմանական հայրենիքի ձգտողներին ներկայացուցիչներին կեանքը դառնացրեց, ո՞վ էր, որ հէնց ամենասուր և զգալի լրտեսութեան դարանի մէջ շրջապատեց գերմանական համալսարանները իրենց ազգային մտքի համար: Իսկապէս հէնց այն ընկերութիւնն էր, որ այսօր հակաազատամիտ միութեան դրօշակի տակ առաջարկում է իրեն իբրև հաւատարիմ նեցուկ նոր գերմանական պետութեան ամենանշանաւոր ստեղծողին: Բոլոր գերմանական մանր պետութիւնների առանձնական և ռէակցիօնէրական տարրերը միացած պրուսական իւնկերների (հասարակ գաւառական ազնուական) հետ մի ազգային պետութեան ձևի երդուեալ թշնամիների հաւաքումն է, որը հիմնուած է սահմանադրական հիմունքների վերայ — նա էր այն ժամանակ և նա է այսօր, որ գերմանական համալսարանների Բիսմարկի գովաբանած հոգին ծաղրում է: Իշխան Բիսմարկը յուսով է, որ գերմանական համալսարանները ինչպէս անցեալում նոյնպէս ապագայում ազգային մտքի կրողը կը լինին:

Նա կը տեսնէ, որ չէ խաբվում իւր յոյսերումը: Բայց նրանք չեն լինի յուզողներ Շաուօկերի մտքովը, որը Հալլէի ուսանողական ընկերութեան վերայ մի յայտնի ազդեցութիւն է ունեցել:

Գերմանական համալսարաններին միշտ և եթ կը տեսնեն մեծ կանցլերի կողքին, քանի որ նա կը գործէ իբրև հիմնող և պահպանող գերմանական ազգային միութեան:

ՖՐԱՆՍԻԱ

«Порядокъ» ռուս լրագիրը Ֆրանսիական առաջիկայ ընտրութիւնների մասին գրում է, հետևեալը:

Ընտրողական պատերազմը այժմ մեծ յուզման մէջ է թէ Գերմանիայում թէ Ֆրանսիայում: Բայց մեծ զանազանութիւնը այս երկու պետութիւնների մէջ երևում է նրանում, որ գերմանական ընտրողներին, նրանց ընտրելիներին և մամուլին դեռ յայտնի չէ, թէ երբ արդեօք կը կատարվին ընտրութիւնները, որի համար դեռ կառավարութիւնը օր չէ նշանակել: Իսկ Ֆրանսիայում, ուր պաշտօնէութիւնը չի կարող առանց ժողովրդական կառավարութեան ընթանալ, ընտրութիւնները տեղի կ՛ունենան օգոստոսի 21-ին (9-ին): Քանի գերմանական կուսակցութիւնը աւելի յարմար է համարում գործերի անորոշ ընթացքը ձգձգել և ընտրողական շարժումը երկարել, նոյնքան Ֆրանսիականը — շտապեց կարելի եղածին չափ այս շարժողութեան ժամանակամիջոցը կրճատել որ ծայրահեղ կուսակցութիւններին, արքայականներին և պապականներին դժգոհութեանց առիթ տուեց:

Պատգամաւորների ժողովի փոփոխութիւնը յիրաւի ամենանշանաւոր դէպքն է համարվում Ֆրանսիայում: Բոլոր երկիրը յուզուած է այժմ իր ցանկութիւնն յայտնելու նոր ընտրութիւնների միջնորդութեամբ իր ներքին և արտաքին ապագայ քաղաքականութեան վերաբերութեամբ: Մի քանի տարիների ընթացքում, երբ գործում էր պատգամաւորների ժողովը, քիչ ջուր չէ անցել, քիչ փոփոխութիւններ չեն եղել քաղաքական կուսակցութեանց դրութեան վերաբերութեամբ, քիչ խնդիրներ չեն պարզվել, շնորհիւ մամուլի և հրապարակախօսութեան կատարեալ ազատութեան, և այժմ ընտրութիւնների նախընթաց օր կարելի է համարեա գրականապէս նախատեսել թէ արդեօք ինչ հետևանքի կը հասցնեն նրանք:

Չէ կարելի օրինակ կասկածել, որ պատգամաւորների նոր ժողովի մեծամասնութիւնը հանրապետական կը լինի: Այս մինչև անգամ այնքան անկասկածելի է համարվում, որ հանրապետական կուսակցութիւնը, որ կառավարչական է, հարկաւոր չէ համարում այլ ևս բացառապէս պատերազմ մղելու արքայականների հետ: Նրան այլ ևս չեն վախեցնում ոչ իշխան Նապօլէօնը իր ծիծաղելի ընտրողական հրաւէրով, ոչ օրինականները իրանց անըմբռնելի կոմս Շամբորով և կղերականութեամբ, ոչ օրլէանականները, որ համարեա արդէն դադարել են անկուսակցութիւն լինելուց: Ընտրողական պատերազմը գլխաւորապէս կատարվում է նոյն իսկ հանրապետական կուսակցութեան զանազան բաժանմանց խնդիրների մէջ:

Հաստատ է և այն, որ արմատականները և այս անգամ պատգամաւորների նոր ժողովում իրանց ուժերը բազմապատկել չեն կարող: Ապագայ ընտրութիւնները քաղաքական կշիռը պիտի տան հանրապետական կուսակցութեանց երկու մեծ խմբերից մէկին — այն է կամ «ձախ հանրապետականներին» (gauche républicaine), որին պատկանում են վարչութեան այժմեան կառավարող անձինք, կամ «հանրապետական միութիւն» (union républicaine), որի ներկայիչները, որոնց թւում և Գամբէտտան, ներկայ կառավարութեան բնական յաջորդներն են համարվում: Այս խմբերից մէ՞կը թէ միւսը զօրեղ կը հանդիսանայ պատգամաւորների ապագայ ժողովում և պատգամաւորների մեծամասնութիւն կը կազմի — այս է միակ խնդիրը, որ դեռ էլի կասկածելի կարելի է համարել ապագայ ընտրութիւնների ժամանակ:

Ըստ երևոյթին յաջողութեան յոյսը «Հանրապետական միութեան», «գամբէտտականների» կամ «օպպորտունիստների» կողմն է, ինչպէս անուանում են հակառակորդները հանրապետական կուսակցութեան այս խմբին: Նա ժողովրդական առաջնորդ ունի, որ միացնում է խօսքի երևելի ընդունակութիւնը քաղաքական հմտութեան փորձառութեան հետ, որ սաստիկ մեծ ազդեցութիւն ունի ժողովրդի և հասարակաց կարծիքի վերայ: Սա այն մեծ գերազանցութիւնն ունի «ձախ հանրապետական» խմբից, որ չէ փախնում իր ընտրողական ծրագրի մէջ մտնել նոր բարենորոգութիւններ, հեռացնել առաջ ընթանալը, այն ինչ վերջինս անշարժ կերպով մնում է ներկայ գոյութիւն ունեցող հաստատութիւններով և բաւականանում է նրանցով։

Գամբէտտայի Տուրի մէջ արտասանած ճառը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի ծրագիր, որով պիտի ղեկավարվի հանրապետական միութիւնը ընտրութիւններին, և բոլոր խնդիրը սորա մէջն է թէ՝ երկիրը ինչպէս կընդունի այդ ծրագիրը, ինչպէս կը վերաբերվի Ֆրանսիան նրա նախագծած թէև շատ համեստ, ներկայ սահմանադրութեան վերաքննութեան և ծերակոյտի վերանորոգման գործին։ Իր ամենայատուկ ճառախօսի բերանով «Հանրապետական միութիւնը» օրէնսդիր երկու ժողովների պաշտպան կանգնեցաւ, թէև առանձին ժողովրդականութիւն չունի նա Ֆրանսիայում։ Աւելի արմատական պահանջներ դնել չը վստահանալով՝ նա ընտրեց այն միջին ճանապարհը, որ նպատակ ունի—կամ ոչ ոքին չը բաւարարել կամ բաւարարել շատ շատերին մի գրօշակի տակ ժողովելով բոլոր զգոյշ, անվճռական և տատանվող մարդկանց։ Ֆրանսիայի նոր ընտրութիւնների հետևանքը ճշտութեամբ որոշելու դժուարութիւնը աւելի կայանում է, նախատեսելու անկարելիութեան մէջ, թէ արդեօք ինչ հետևանքներ կունենայ Տուրի մէջ արտասանած փորձնական ճառը։ Բայց այս դժուարութեան հետ համարեա անխախտ կերպով կարելի է ասել, որ պատգամաւորների ժողովում ձայների մեծամասնութիւն ձեռք կը բերի աւելի «Հանրապետական միութիւնը», քան «ձախ հանրապետական» կուսակցութիւնը։

Այսուամենայնիւ Ֆրանսիայում լինելիք առաջիկայ ընտրութիւնները այս երկրի հասարակական առանձնայատկութիւն են ներկայացնում—կուսակցութիւնների պառակտումը, որ միշտ լինում է ժողովրդական կեանքի այս նշանաւոր դէպքի ժամանակ, որը ամենևին չունի այս անգամ իւր սովորական կրքոտ բնաւորութիւնը։ Ֆրանսիական լուրջ լրագրերի ասելով, Փարիզի մէջ այժմ գտնվող օտարազգին մինչև անգամ չի էլ նկատել, որ Ֆրանսիան ընդհանուր ընտրութիւնների նախընթաց օրուայ մէջն է։ Եւ այս հասկանալի է։ Յաջող քաղաքական ինքնավարութեան մի քանի տարիները իւր ուժերը ցոյց տուին և գործի ներկայ կարգի հաստատութիւնը։ Այժմ պառակտումը բոլորովին հակառակ ուղղութեան կուսակցութիւնների մէջ չէ՝ արքայականների և հանրապետականների, ինչպէս այս վերջին ընդհանուր ընտրութիւնների ժամանակն էր,—նա գլխաւորապէս միևնոյն հասարակապետական կուսակցութեան երկու գոյների մէջ է, որոնք իրար հետ համաձայն են գլխաւոր հիմքերում և տարբերվում են միայն գործողութեանց միջոցներով և մանրամասնութեանց մէջ։ Երկիրը գիտէ, որ այս կուսակցութեան որ խումբն էլ որ յաղթէ ընտրութիւններին, նա իր խոստումները և հաստատութիւնները կը պահպանի։

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

«Порядокъ» լրագրին հաղորդում են, որ ներքին գործերի պաշտօնեան ներկայումս զբաղուած է տնտեսական կողմից շատ նշանաւոր խնդրով, որ վերաբերում է այսպէս անուանեալ «չարչիութեան», ժողովրդին հարստահարելու առաջն առնելու միջոցներին։ Այս բանին առիթ է տուել ներկայ առատ տարին, որ պահանջում է մի քանի առանձին միջոցներ այն խարդախութիւնները չը կրկնվելու համար, որ եղան 1874-ին Սամարի նահանգում, իսկ վերջին 1880 թ., երբ այդպիսի չարչիները արհեստական սով արին երկրի մէջ։ Պաշտօնէութեան ձեռնարկած միջոցների հիմնական գաղափարն է տարածում Ռուսաստանի առևտրական աշխարհի մէջ անկարգ գրութեան առաջն առնել։ Եւ այս նպատակով պաշտօնէութիւնը դիտաւորութիւն ունի Ռուսաստանի հացի գըլխաւոր վաճառանոցներում հեռագրութիւն հաստատել, որ այդ միջոցով ամեն ժամանակ կարելի լինէր որոշել այս ինչ կամ այն ինչ, մասնաւոր կամ հասարակաց ձեռքերում եղած հացի քանակութիւնը Ռուսաստանի մէջ և պահանջի որքանութիւնը արտասահմանում, և այդ կերպով հարկաւոր ժամանակը հնարաւոր միջոցների ձեռնարկել։

⁂

ԴԱՐԱՔԻԼԻՍԻՑ մեզ գրում են.—Երբեմն կորչում էր Դարաքիլիսի փոստայի կայարանից մեր լրագրերը, նամակները։ Շատ անգամ շաբաթներով նամակը մնում էր այնտեղ վեր ընկած և տիրոջը չէր հասնում։ Բայց այժմ պ. Կարլ Ալէքսանդրովչի և նորա օգնական հայ երիտասարդ Թոմաս Պետրոսեանցի աշալուրջ հսկողութեան տակ՝ էլ այդպիսի զեղծումներ չեն պատահում. ամեն թղթակցութիւն կարգին իւր ժամանակին ընդունում են և իրան ժամանակին տէրերին հասցնում։ Ուրեմն շնորհակալութիւն յիշեալ պաշտօնեաներին։ Շատերիս սրտի ցանկութիւն է, որ այդ տեսակ պաշտօնեաները երկար մնային Դարաքիլիսում։

⁂

ՇՈՒՇԻՒՑ մեզ հաղորդում են.—Սրանից քանի մի օր առաջ Հացի գիւղական չորս երիտասարդ չարագործներ, որոնք միշտ աւազակութեամբ են պարապվում, գիշեր ժամանակ գալիս են մի թշուառ կնոջ իւր անկողնից հանում, թաշկինակը բերանին կոխած տանում ու հեռու գիւղից մի ձոր Հիլխա ձոր անունով, այնտեղ բռնաբարելով թողնում են անյայտանում։ Թէև չարագործները յայտնի են, բայց գիւղական իշխանութիւնը ուշք չէ դարձնում սորա վերայ, վախենալով թէ՝ մի գուցէ չարագործներն իրան չը վնասեն։ Դարձնում ենք քաղաքական իշխանութեան ուշքը այս չարագործութեան վրայ, որին երբէք ներել չի կարելի։

⁂

ՍՈՒԼԴԱ գիւղից մեզ գրում են.—Գիմքերգա, Ջանղուրա և Ջիփլիկ գիւղերի հասարակութեան ձեռքից, սենատի վճռի զօրութեամբ, այս տարի առնված է մեծաքանակ վարելահող և յանձնված հողատէր Մուսխէլովներին (Ախալցխացի)։ Բայց զարմանալին այն է, որ հողերի հետ պ. Մուսխէլովները սկսել են գիւղացիների ձեռքից առնել և այս տարուայ վարուցանքը և ապօրինաբար գիւղացիներին հեռացնելով, վախեր և անտի երկիւղներ տալով՝ Մուսխէլովները իրանք սկսել են հնձել գիւղացիների մշակած բերքերը։ Թիֆլիսի նահանգապետը, ինչպէս այդ երևում է նորա հեռագիրներից, գիւղացիներին պաշտպանում է, սակայն Ախալքալաքի գաւառապետ Տրադզով մայիօրը, գոնեա գիւղացւոց ասութեամբ այնքան տաք սիրտ չ՚ունի դէպի այդ թշուառ հասարակութիւնները, որոնք իրանց կենդանիների հետ այս տարի քաղցածութիւնից կը կոտորուին, եթէ հողատէր Մուսխէլովի բռնաբարութիւնների առաջը վաղօրօք չ՚առնուի։

⁂

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են.—Ցեղացի մահտեսի Գրիգոր Տէր-Կիրակոսեանը մեռնելիս կտակել է իրան ժառանգ մահտեսի Յովհաննէս Տէր-Կիրակոսեանին, որ սա Ախալքալաքում մի եկեղեցի շինէ։ Հանգուցեալը եկեղեցու համար յատկացրած հողը պարսպապատ է արել և բաւականին նիւթեր պատրաստել, բայց ասում են, ժառանգը այժմ չէ ուզում հօր կտակը կատարել և այլևայլ պատճառներով աշխատում է կտակի հաստատուելը յետաձգել, մինչև օրէնքի որոշած մէկ տարի ժամանակի լրանալը, երբ կտակը կ՚ոչնչանայ։ Ցանկալի էր, որ հոգ. իշխանութիւնը ստիպէր հանգուցեալի ժառանգին վաղօրօք հաստատել տալ կտակը. իսկ մինչև այն ժամանակ հաշտարար դատաւորի միջոցով հանգուցեալի կայքերը կնքել տար օրէնքի գրաւադրութեան համեմատ պահպանողական միջոցներին։

—Ամբողջ Ախալքալաքի վիճակը հողի մեծ նեղութիւն է կրում։ Դատաստանական գործերի ամենամեծ մասը հողի վէճեր են։ Ես կարծում եմ, որ գիւղացիների տրտունջների առաջը այն ժամանակ միմիայն կ՚առնուի, եթէ իշխանութիւնը թոյլ տայ տեղական ազգաբնակութեան մի փոքրիկ մասին գաղթել Կարսի թափուր նահանգը։ Այսպէսով միմիայն վիճակի աշխատող ձեռքերը կարող կը լինեն հող գտնել, իսկ այժմ «մշակք բազումք են և հունձք սակաւք»։ Վէճ ու կռիւը միշտ կը լինի և ժողովրդի տնտեսական վիճակը հետզհետէ կը վատթարանայ։

⁂

Երեկ, «Մեղուի» 159 համարում քաղաքական տեսութեան մէջ սխալմամբ տպուել է «...61-րդ յօդուածը խիստ է. կարճ է» պէտք է կարդալ «խիստ կարճ է»։ Նոյնպէս փոխանակ «ինչպէս քաղաքավարի էր Բէրլինի կոնգրէսի վճիռը Հայաստանի վերաբերմամբ» պէտք է կարդալ «Յունաստանի վերաբերմամբ»։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Բիրլուզայից հաղորդում են, որ երկաթուղու կառքի մէջ գտնվեցաւ մի արկղ, որից հեղանիւթ էր հոսում։ Ապրանքների վերայ հսկողը մատնացոյց արաւ այդ արկղի վերայ, որ դա կարող է ուրիշ ապրանքները փըչացնել, որ այդ արկղի հետ միասին ուղարկվում էին և սրա համար էլ նրա վերայ ուշադրութիւն դարձրին։ Երբ արկղը բացեցին, նրա մէջ գտան մարդու դիակ։ Արկղը ինչպէս երևեցաւ Պօլտավայից Օդէսսա էր ուղարկվում։ Սրա համար քննութիւն է նշանակված։

⁂

Ռուսաստանի Նոր-Գիւղի մէջ սարսափելի անցք է կատարվել. նոյն գիւղացի Ռիւմին անունով մէկը սպանեց իր կնոջը։ Սպանութիւնը օր ցերեկով կատարվեցաւ և շատ գիւղացի ականատեսների առաջ։ Ինչպէս պատմում են մարդ ու կինը միշտ կռվում էին իրար հետ։ Մի օր էլ կռվելով մարդը սկսեց ծեծել կնոջը։ Կնոջ աղաղակներին հաւաքվեցան շատ մարդիկ, բայց նրանք առանձին նշանակութիւն չէին տալիս ասելով, որ մարդ ու կինը կը կռվեն և կը հաշտվեն, թէև գտնուեցան մարդիկ, որոնք խղճալով կնոջը ոստիկանութեան պահպանի ուշադրութիւնը դարձրին, բայց սա էլ նոյնպէս անհոգ գտնվեցաւ և աւելորդ համարեց գործքի մէջ խառնվելու։ Շուտով խեղճ կնոջ աղաղակները դադարեցան և մի քանի րոպէից յետոյ Ռիւմինի տանը այլ ևս ոչինչ չէր լսվում, իսկ ամբոխը ցրվեցաւ։ Մի ժամից յետ Ռիւմինի դրացի պառաւ կինը գնաց ծեծուած կնոջ տեսութեան, բայց երբ պատուհանի մէջ նայեցաւ՝ սարսափելի պատկեր ներկայացաւ նրա աչքերին։ Ռիւմինի կնոջ դիակը ընկած էր յատակի վերայ, բոլոր կահ-կարասիքը, պատերը արիւնով շաղախուած էին։ Ինչպէս երևում էր մարդու և կնոջ մէջ յուսահատական կռիւ էր կատարվում։ Պառաւի գոռալուց ամբոխը հաւաքվեցաւ, կողպուած դուռը կոտրեցին մտան, բայց Ռիւմինին չը գտան։ Նա փախել էր և մինչև այժմս էլ չէ գտնված։ Կանչուած բժիշկը կենդանութեան նշաններ գտաւ և հրամայեց խեղճ կնոջը հիւանդանոց տանել, բայց ճանապարհին մեռաւ նա։ Կնոջ վէրքերի ձևից կարելի է եզրակացնել, որ սպանութիւնը կացինով կամ մեծ դանակով է կատարված. մարմինը շատ վէրքերով է ծածկուած, իսկ երեսը այնպէս կտրատած է, որ մի ամբողջ վէրք է ներկայացնում։

⁂

Նիւ-Եօրկից գրում են մի կնոջ ողբերգական վախճանի մասին։ Արկանզասի բերանի մօտ Նոր-Օրլէանից հիւսիս այնպիսի սարսափելի փոթորիկ բարձրացաւ, որ դարաւոր ծառերը ընկնում էին ինչպէս տաշեղներ։ Փայտահատ Ուիլլեամ Կօնվէյն և նրա որդի Ջիմմին փոթորկի ժամանակ անտառումն էին, և ժամը 5-ին, երբ կատաղի քամին դադարեցաւ, տիկին Կօնվէյն, որ ամուսնուն և որդուն գտնելու էր գնացել, նրանց ահագին ծառերի տակ գտաւ. կէս ջարդուած հայրն և որդին դեռ ես հառաչում էին մահուան տանջանքներից։ Դժբաղդ կինը և մայրը ուղարկեց նոյն րոպէին իրան ուղեկցող երկու երեխաներին մերձակայ գիւղը 30 մղոնի վերայ խնդրելու գիւղացիներին անմիջապէս օգնութիւն հասնելու։ Դրացիները առաւօտից վաղ չը կարողացան գալ, նրանք խեղճ կնոջը թուլութեան մէջ գտան, արեան լճի մէջ մարդու և որդու ջարդուած դիակների մօտ, նրա ձեռքերը դողով սըղմում էին հրացանը, թանձր շագանակագոյն մազերը սպիտակել էին ինչպէս ձիւն։ Նրանք այժմ հասկացան թէ ինչ է պատահել։ Նրանց դժբաղդ ընկերները ազատուեցան տանջանքներից, շնորհիւ այս կնոջ գերբնական վճռականութեան։ Նրան տարան տուն, բայց շատ դժուար էր նրան կենդանացնել։ Նրա մարմինը չը կարողացաւ տանել հոգեկան ծանր պատերազմին, նա զոհ գնաց ջղային տաքութեան և թաղուեցաւ իր թանգագին էակների հետ միասին։ Մահուանից առաջ նա կարողացաւ պատմել, թէ ինչպէս նրա ամուսինը աղաչում էր նրան յանուն նրանց փոխադարձ սիրոյ ազատել նրան և որդուն սարսափելի տանջանքներից և մատնացոյց արաւ մօտիկ ընկած հրացանի ինչպէս ազատութեան միակ միջոցի վերայ։ Նա երկար կռվում էր իրան հետ, բայց վերջապէս յուսահատութեամբ—առաջ արձակեց որդու վերայ հրացանը, յետոյ ամուսնու վերայ։

⁂

Գեղացի պառաւին մէկը քաղաք կերթայ ու ագռաւ մը կը գնէ. կը հարցնէ քովինը թէ այդ ագռաւը՝ ինչ պիտի ընէ։

—Հոգի, կըսէ պառաւը. Էրիկս զրուցեց թէ ագռաւը երեք հարիւր տարի կապրի. պիտի փորձեմ տեսնելու համար թէ իրաւ է ըսածն։ (Լոյս)։

⁂

—Այսչափ տարուան խմբագիր ես, այս ինչ է արթրես, ամենուն կինը օգափոխութեան կերթայ կոր, այս տարի ինձի անպատճառ օգափոխութեան պիտի տանիս, ապա թէ ոչ՝ կը տեսնես գլուխդ ինչ փորձանքներ կը բերեմ։

—Կնիկ, աղէկ ամա, ատակ ո՞ւր է որ քեզի օգափոխութեան տանիմ, դուն չես գիտեր որ խմբագրութիւնը մուրացկանութեան պէս բան մը նէ հիմա։

—Ես անանկ բան չգիտեմ. ամեն ալ կըսեն կոր, քի քուկին կաղէթադ հիմա շատ կը ծախուի կոր, ես անանկ պարապ խօսքեր ալ մտիկ չեմ կրնար ընել. կամ պիտի տանիս և կամ ամեն իրիկուն քեզի հանգիստ չեմ թողուր. հէլպէթ անանկով ես ալ հախէդ կուգամ։

—Գիտես քի ես ալ քու հախէդ չեմ կրնար գալ՝ բաւ էրիկն. վաղն լրագրիս մէջ քաղաքականութեան դպչելիք յօդուած մը կը հրատարակեմ. զիս կը բանտարկեն և ձեռքէդ կազատիմ վերջապէս։

(Լոյս)։

⁂

Կայրենէ հանըմ, էրիկդ ինչպէս եղաւ։

—Աւելի պէս չէ. սակայն բժիշկը ըսաւ որ խուլութիւնը բնաւ չպիտի անցնի և թէ [illegible]։

—[illegible] ժամանակիս յարմար ամուսին մը պիտի ունենաս [illegible]։ (Լոյս)։

⁂

—Ճանըմ Հաճի աղայ, ինչու համար մէկ խօսքը երկու երկու կը կրկնես։ Երկուութեանս ինչ կելլայ։ փառք Աստուծոյ խուլ չեմ և մէկ անգամ ըսելով կիմանամ։

—[illegible] հոգի կնիկս մէկ խօսքը մինչև [illegible] անգամ չկրկնէի՝ չէր հասկնար. ես ալ այնպէս վարժուեցայ ու՝ ալ ինծի սովորութիւն մը եղաւ. մէկ մ՚ալ որ ես այնպէս կը կարծէի թէ՝ ամեն կիները ալ [illegible] մէկ անգամէն խօսք չեն իմանար. բայց հիմա կը [illegible] որ այս կարծիքս սխալ է եղեր. [illegible] կնկան վրայ քու գլուխըդ [illegible] եղաւ, և գուցէ [illegible] գլուխներու պատահի։

(Լոյս,—Արեւելք)։

Խմբագիր Գ. ԱՐԾՐՈՒՆԵԱՆՑ
Հրատարակիչ Հ. ԵՆԳԻԲԱՐԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Նուխու ազգային հոգևոր դպրոցին ՀԱՐԿԱՒՈՐ է ունենալ մի ՈՒՍՈՒՑԻՉ ռուսաց լեզուի և թուաբանութեան՝ 600 ռ. ռոճիկով. այլ և հարկաւոր՝ են ուսուցիչներ Ղարաբաղու և Նուխու գիւղական դպրոցների համար: Ցանկացողներից խնդրում եմ շուտով գրել ինձ Շուշի:

Թեմ. վերատեսուչ Ց. Տէր-Գրիգորեանց.

ՄՈՎՍԷՍ ՎԱՐԴԱՆԵԱՆՑ ԵՒ ԸՆԿ.

ՆՈՐ ՏՊԱՐԱՆԸ

Տեղափոխուեցաւ աւելի յարմարաւոր տեղ, այն է Տրօիցի փողոցի վերայ № 11, Նամակատան (փոստին) կից եսի փողոցում: Ընդունվում է ամեն տեսակ պատուէրներ:

ԵՐԴՈՒԵԱԼ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ

ՍԵՐԳԷՅ ՎԱՍԻԼԵՎԻՉ ՉԷՄԷՍՈՎԸ

Տեղափոխվեցաւ Արսէնալնի փողոցի վերայ «Կրուժօկի» ձմեռային բնակարանի յետևի փողոցը, Գօրբունովի տանը: 4—5 (շ).

Ց. ՄԵԼԻՔ–ԲԷԳԼԱՐՈՎԻ

Մասնաւոր ռէալական ուսումնարանի մէջ (Թիֆլիզ, Բարոնսկի փողոց, տ. № 10, ուր առաջ կոմէնդանտսկոն էր գտնվում) լրացուցիչ և ընդունելութեան քննութիւնները կ'սկսվին ՕԳՈՍՏՈՍԻ 20-ից, իսկ ուսումը ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ից:
3—4

Վիմագրութեամբ լոյս տեսաւ և վաճառվում է առ այժմ Ալէքսանդրապօլում Կարապետ Յովհաննիջանեանի աշխատասիրած 2-դ նկարը, որ պարունակում է ԽՆԾԿՕՆԻՑ մենաստանների հետ, ՇԻՐԱԿԻ ՄԻ ՆՇԱՆԱՒՈՐ ՀՆՈՒԹԵԱՆՑ աւերակները, որոնք հրատարակուած չէին եղել տակաւին ոչ լուսանկար և ոչ էլ վիմատիպ պատկերներով: գինն է 1 ռուբլի: Կարելի է ստանալ հետևեալ հասցէով՝

Въ гор. Александрополь, **Карапету Хачатурянцу Аганджаніанцъ:**

Խնդրում եմ այն ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ, որոնք կը ցանկան առաջիկայ սեպտեմբերից մանկավարժութիւն անել ԵՐԵՒԱՆԻ և ԿԱՐՍԻ վիճակներումը, բարեհաճին յայտնել ինձ իւրեանց պայմանները և դասախօսութեան առարկաները: Հասցէս՝ Վաղարշապատ:

Պաշտօնակատար Թեմական վերատեսչի՝

Պ. Պռօշեանց.

Խնդրում եմ ԵՐԵՒԱՆԻ և ԿԱՐՍԻ վիճակների գյուղական հոգաբարձութիւններից առաջիկայ սեպտեմբերից հարկաւոր եղած ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ համար գրել ինձ, յայտնելով մանրամասնօրէն իւրեանց պայմանները, վճարելիք ռոճիկի քանակութիւնը, աւանդելիք առարկայքը, դասերի որքանութիւնը և այլն:

Պաշտ. Թեմական վերատեսչի՝

Պ. Պռօշեանց.

Դուրս եկան մամուլի տակից

Հրատարակութեամբ Զաք. Գրիգորեանցի «ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ» և վաճառվում են.

1) Տէրենցի «Թէոդորոս Ռշտունի», գինն է	1 ռ.	— կ.
2) — — «Թորոս Լևոնի», երկր. տպագրութիւն	1 ,,	— ,,
3) — — «Երկունք Թ. դարու»	1 ,,	— ,,
4) Գամառ-Քաթիպա «Մանկակ. ոտանաւ. և երգեր»	— ,,	20 ,,
5) «Դիւցազունք՝ Հայկ, Արամ և Վահագն»	— ,,	30 ,,

Վաճառվում են և հետևեալ նոր հրատարակութիւնները.

1) «Սոխակ Հայաստանի», հատոր ա. գինն է,	1 ռ.	— կ.
2) Րաֆֆի «Դաւիթ-բէկ» առաջին հատոր	1 ,,	50 ,,
3) — — «Խէնթը»	1 ,,	20 ,,
4) Այվազեանց Գ. արքեպ. «Պատմութիւն խալիբեան ուսումնարանի»	2 ,,	— ,,
5) «Տնային բժշկական մարմնամարզութիւն»	— ,,	40 ,,
6) Քիշմիշեան, «Բուսաբանութիւն համառօտ»	— ,,	30 ,,
7) Կոստանեանց, «Գրաբառ. բայերի խոնարհումը»	— ,,	25 ,,
8) Աթանասեանց, «Երևանի նահանգի բուսաբանութ.»	— ,,	50 ,,
9) Ն. Ք. Ղ. «Խօսակցութիւն օրիորդաց մէջ»	— ,,	10 ,,
10) Մօզեսովի «Մարդուս բարոյական զարգացումը»	— ,,	30 ,,

13—20

Ցանկանալով հրատարակել «Горе отъ Ума» կոմեդիայի հայերէն ՈՏԱՆԱՒՈՐՈՎ թարգմանութիւնը՝ «ԽԵԼՔԻՑ ՊԱՏՈՒՀԱՍ» վերնագրած՝ դիմում եմ ընթերցասէր հայ հասարակութեան օժանդակել ինձ բաժանորդագրութեամբ տպագրութեան անցկացնելու համար: Բաժանորդագրութեան գինը իւրաքանչիւր մի օրինակի համար նշանակած եմ մի ռուբլի: Յուսով եմ, որ մերայինք չեն զլանալ իւրեանց օժանդակութիւնը ցուցանելու այսպիսի մի յայտնի բեմական գրուածք ունենալու համար մեր գրականութեան մէջ: Ցանկացողք կարող են գրել «Մեղուի» խմբագրատան:

Կ. Տէր-Աստուածատրեան.

Գրիգոր Տէր-Մելքիսեդեկեան՝ «ԱՇԽԱՏԱՆՔ» լրագրի խմբագիր, ունի ցանկութիւն առաջիկայ սեպտեմբերից գնալ հայ գաւառ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ կամ ՏԵՍՉԱԿԱՆ պաշտօնով: Ցանկացող ուսումնարանական վարչութիւնք թող բարեհաճին վաղօրօք յայտնել իրանց ցանկութիւնը այն հասցէով. Въ Тифлисъ, въ редакцію газеты „Трудъ,“ караванъ-сарай Тамамшева, 5-ый этажъ, № 15:

Յառաջիկայ ուսումնական տարուայ համար ԵՐԵՒԱՆԱՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑԻՆ հարկաւոր են ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ Հայոց, գաղղիերէն լեզուների, գծագրութեան, տոմարակալութեան, Ռուսաց վայելչագրութեան, Ռուսաց պատմութեան և Ռուսաստանի աշխարհագրութեան համար. և մի ուսուցիչ տղայոց ծխական դպրոցի: Ամեն մի ուսուցիչ պարտաւոր է ունենալ շաբաթական 24 դաս: Ցանկացողները թող բարեհաճին իւրեանց պայմանները և ուսման վկայականները առաջարկել նոյն դպրանոցի վարչութեանը:

Անդամ հոգաբարձութեան՝

Վարդան Եղիազարեանց

«ԹԻՖԼԻԶԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԵՐԷՆ ԳՐՔԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ».

Դուրս եկաւ մամուլի տակից և ծախվում է Թիֆլիզի բոլոր գրավաճառների մօտ «Ռօբինզօնի պատմութիւնը», թարգմանութիւն Գիւտ քահանայի Աղանեանց. գինն է 60 կոպէկ:

Արդէն Մոսկվայում դուրս եկաւ մամուլի տակից նոյն ընկերութեան հրատարակութեամբ և ստացուեցաւ ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱՅԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆՑ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ հեղինակի պատկերով:

Գինը լինելու է 50 կոպէկ:

Նոյն փառակազմ 1 ռ. 20 կոպ.:

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԳՐԻԳՈՐԻ ՎԱՐԶԵԼԵԱՆ.

Ընդունուած է իբրև ձեռնարկ Ներսիսեան ազգային հոգևոր դըպրանոցում և բոլոր Վրաստանի և Իմերէթի թեմի միջնակարգ ուսումնարաններում:

Գինն է 70 կոպէկ:

Ուսումնարանները և շատ օրինակ գնողները ստանում են զեղչում 20%:

Ցանկացողները կարող են գրել կամ ուղղակի հեղինակին.—Тифлисъ. Армянская духовная семинарія, Григорію Солмооновичу Вардзеляну, կամ կենդրոնական գրավաճառանոց, ուր պահեստն է այդ գրքի:

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ

Պ. Մ. ԼԷԲԷԴԻՆՍԿԻ

Տեղափոխվեցաւ Օրլովսկու տանը, ինստիտուտի մօտ.

3—5. (շ).

Մ. ՎԱՐԴԱՆԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ.

ՆՈՐ ՏՊԱՐԱՆՈՒՄ

Ընդունվում են և պատուէրներ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՓՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ տպագրութեան համար փայտի և պղնձի վրայ ամենամատչելի գներով:

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ-ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ հոգաբարձութիւնը յայտնելով V և VI ԴԱՍԱՏԱՆՑ նախկին ուսումնաւոր ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ, թէ առաջիկայ սեպտեմբերից բացվում է VII դասատունը ուսուցչութեամբ մանկավարժ պ. Ա. ՌԱՔԵԼԻ ԲԱՀԱԹՐԵԱՆ, հրաւիրում է նոցանից ցանկացողներին առանց հարցաքննութեան մտնելու VII-դ դասատունը ուսանելու, ուր ուսման ընթացքը աւարտողը կ'ըստանայ մրցանագիր:

Ցանկացողները իրանց յօժարութիւնը կարող են յայտնել մինչև առաջիկայ օգոստոսի 25-ն պ. տեսչին դպրանոցիս գրասենեակ կամ բերանացի:

Հոգաբարձու Գ. Գորգանեանց.

«ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅԵՐԷՆ ԳՐՔԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ» անցեալ տարուայ անդամները և ցանկացողները անդամ դառնալու կարող են գրել ընկերութեան գանձապահ պ. Մովսէս Թաւաղեանին, Թիֆլիսի առևտրական բանկա անդամակցական վճարը հատուցանելու և տոմսակ ստանալու:

Խնդրում եմ ՎՐԱՍՏԱՆԻ ու ԻՄԷՐԷԹԻ թեմի ազգային հոգևոր ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ վարչութիւններին մինչև առաջիկայ օգոստոսի 1-ը հաղորդել ինձ, եթէ ունին որ և իցէ առարկայից ուսուցչի կարօտութիւն. իսկ այն անձանց, որոնք ցանկանում են ծառայել յիշեալ ուսումնարաններում հրաւիրում եմ վաղօրօք յայտնել ինձ իրանց ցանկութիւնը բերանացի կամ գրաւոր:

Թեմական վերատեսուչ Գ. Բարխուդարեանց.

Դուրս եկաւ մամուլի տակից «ՍՈԽԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ազգային լիակատար երգարանի Առաջին հատորը երկրորդ տպագրութեամբ, փոփոխած, որի մէջ գտնվում են բացի այն բոլոր երգերից, որոնք յայտնի են ժողովրդին, նոյնպէս նոր երգեր, հայրենասէր բանաստեղծութիւններ և արձակ գրուածներ: Վաճառվում է. Թիֆլիս «Կենդրոնական» և «Կովկասեան» գրավաճառանոցներում, Երևան՝ պ. Աբգար Գուլամիրեանցի խանութում, Բագու՝ պ. պ. Գրիգոր Դիլդարեանցի և Ս. Տէր-Օհանեանցի խանութներում: Օտարաքաղաքացիները կարող են դառնալ Բագու նոյնպէս «ՍՈԽԱԿԻ» խմբագիր-հրատարակչին այս հասցէով. Аваку Лазаревичу Григоріанцу, въ Баку. Իւրաքանչիւր օրինակի գինն է 1 ռուբլի:

Աւագ Գրիգորեանց.

ՔԱՐՏԷԶ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Մինչև օգոստոսի կէսը լոյս կը տեսնի մեր դասագրիս յարմարեցրած Հայաստանի քարտէզը գոյներով ներկուած կազմուած կիպէրտի: 1) «Special kart Türkischen Armenien». 1) Die Euphrat—Tigris lander. Armenien. Kurundtan Mesopotamien» 3) «Asiatische Turqei Kaukasus lander». Berlin և այլն Պետերմանի Klein-Asien und Syrien. Armenien. Kurdistan. Mesopotamien. Cotha. և այլն:

Ցանկացողները կարող են գրել ուղղակի աշխատասիրողին հետևեալ հասցէով. Тифлисъ. Армянская дух. семинарія Нерсесьянъ учителю. **Аветику Теръ-Акопьянцъ.**

ԾԱԽՎՈՒՄ Է

Արդիւնաբեր ՏՈՒՆ, կողմնակի շինութիւններով, որոնց զետնի տարածութիւնն է 225 քառ. սաժէն փոքրիկ պարտէզով բակում, գրաւ է դրած պրիկազում:

Գինն է 4000 ռուբլի:

Նովօ-տրոյիցկայէ Պոսելինիէ № $^{12}/_{13}$ Հարցնել Շահվերդովի կոնտորում:

ՍԻՄՖԵՐՈՊՕԼԻ ՀԱՅՈՑ ԾԽԱԿԱՆ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑԻ

համար հարկաւոր է մի ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉ, որ ծանօթ լինելով մանկավարժական նոր ձևերի հետ, կարենայ ուսուցանել հայոց լեզու երկու նախակրթարաններում, հայոց պատմութիւն առաջին և երկրորդ դասատներում և կրօնք բոլոր չորս դասատանց մէջ: Պայմանների մասին կարելի է տեղեկանալ «Մեղու Հայաստանի» լրագրի խմբագրի մօտ:

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ

ՈՒՍՈՒՑԻՉ

ԱՆՈՒՆՈՎ

Մեր ԵՐՐՈՐԴ ՏԱՐՈՒԱՅ դասագիրքը լոյս տեսաւ և ծախվում է Կովկասեան ու կենդրոնական գրավաճառանոցներում:

ԳԻՆՆ Է 40 ԿՈՊԷԿ:

Իսկ ով ցանկանում է հատը 35 կոպէկով ձեռք բերել, գինը ԿԱՆԽԻԿ վճարելով և ճանապարհածախսը իր վերայ առնելով՝ թող գրէ մեզ հետևեալ հասցէով.

„Въ Тифлисъ.—На Авлабарѣ. Ивану Петровичу Назарянцъ“

Շուտով լոյս կը տեսնի նաև ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐՈՒԱՅ դասագիրքը:

Ց. Նազարեանց.

8—25

ՉԵՆ ՀԱՍՑՐԱԾ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

5 յուլիսի.

Յակոբ Սահակովիչ Սահակովին, երկրորդ գիմնազիայի հոգաբարձուին, գէնէրալ-մայոր Լիլիստովին, Խանջեանին, Ցէրպիցկուն Գէրմանին, Ավէրկիևին, Սինկովիչին, գլխաւոր բժիշկ Միխայլովին, Բուզդան Թոխաթելովին, Տէր-Սահակովին.

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ 6-го Августа 1881 г. Типографія М. Ротиняцъ и К. Տան բժշկապետ Մ. Ռոտինեանց.